

891.85

0-30

4881

891.85

0-30

1

131⁴ Г

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться
ею.

12003

85-3

1-30

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՈՑ ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԻՆ

№ 181

ԻՒԼԻԱՆԿԱ

ՀՕՏ Է. ՕՓԵՃԿՈՅԻ

Թարգմ. Պ. ՀԱՎՈԽԵՍՆՅԱՔ

№ 7 ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ Պ. ԳՈԼՈԽԵՍՆԻ ԳՈՒՄԱՐԱՆ № 7

167



ԹԻՖԼԻՍ

Տպարան Պատգ Հրամ. Ընկ. || Տիպոգրաֆія Груз. изд. Т—ва.

1900

2011

70-54

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՄԱՐԱԿԱՆԱԲՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 181

891.85

10653

Դ - 37

Ե. ՕՐՃԵԿՈՂԻՑ

294

ԻՒԼԻԱՆԿԱ

տօւ

ԳՐԱԴՐՈՒԿԱ ԳՐԱԴՐՈՒԿԱ

6128

Թարգմ. Պ. ՀԱՎՈՒԵԱՆՅՑԻ

№ 7 ՀՐԱՄԱՐԱԿԱՆԱԲՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳՈՒՄԱՐԱԿ № 7

Центральная биб-ка им. Ленина

Санкт-Петербург

ИНВЕНТАРИЗАЦИЯ 1936 г.

№
թիվ

Տպարան Վրաց Հրատ. Ընկ. || Типографія Груз. изд. Т-ва.

1900

1502-102

3980154690 .4

ԱՐԴՅՈՒՆԱԴՐ

Дозволено цензурою. Тифлисъ, 12 Апрѣля 1900 года.



$$\frac{1002}{6344} q$$

— 1 —

միջակոց թ հաւըսաք նազրով պատ
- ամառաւ առաջ առա բայ ունեա մի զրաբով
- աշխա միջակոց գովածի մարտոց մի բայ
Առան ուր ուրան թ մայստ մի ուն զրաբ
ու առայ մ ա մայստ միջակոց բայ ու
ու թ բայ ըս թ մ ա հայուսի ցըմիջակոց
միջակոց թ ի ի լ ի ս ն կ ս

Ի Ւ Լ Ի Ա Ն Կ Ա

ԼԵՀԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻց ՄԵԿՈւՄ, յետընկած մի փողոցի համարեա թէ ծայրին, կայ լայն ու արձակ մի բակ՝ շրջապատուած փայտաշէն հին շէնքերով:

Բակի այս ու այն անկիւնում գեռ մինչ
չե այժմ էլ մնացել են մի քանի հատ բազ-
մաձեւ և քաղցրաբոյր կակղիներ. աղբի և
քարի կոյտերը ծածկուել են բանջարով ու
վայրենի տեսակ-տեսակ բոյսերով. տեղ-տեղ
կեղտոտ խոտերի միջից դուրս է նայում վայ-
րի վարդը, և մինչեւ անդամ թաւուտ ազ-
նիւ վարդի թուփ էլ է երեսում. Այդ բո-
լոր նշաններից երեսում է, որ ժամանակով
այդտեղ մի շքեղ ու հովասուն պարտէզ է
եղել:

Բակի խոլքում կանգնած է քարաշէն կիսաւեր մի տուն։ Այդ տան պատուհաններից մի քանիսի փեղկերը բոլորովին անհետացել են, մի քանիսն էլ թէպէտ դեռ մնում են, բայց բոլորովին հնացած և փտած. ապակիները խաւարած են և տեղտեղ էլ ապակու տեղ թուղթ է քաշած... Բոլորովին նոր շամի փեղկ էլ է երկում, որն այդ տան կենողները նոր են յարմարացրել, իրենց աղքատիկ կեցութիւնը սքօղելու համար, մինչեւ անգամ պատուհանից վարագոյր էլ է կախուած և ծաղկամաններով էլ զարդարուած...

Կար ժամանակ, որ այդ ամբողջ բակը իշխանսական մի ապարանք էր։ Քարաշէն տան մէջ ապրում էին իրենք պաները¹⁾, խկ փայտաշէն շէնքերը նրանց ծառաների բնակարանները, ախոռներն ու սրահներն էին։ Վառնել են արդեօք պաները իրենց ունեցած չունեցածը, թէ անյաջողութեան պատճառով աղքատացել և կամ թէ քաշուել մի կողմով, յայտնի չէ։ Միայն այսքանը յայտնի է, որ այդ տունը ամսյացաւ և դարձաւ քաղա-

¹⁾ Ուստիայի արեմտեան մասում լեհաբնակ և մալարսարնակ նահանգներում կալուածառէրելին ասում են ապան։

քի սեպհականութիւն, այժմ քաղաքային կառավարութիւնը թէ տունը և թէ կողքի փայտաշէն շէնքերը չնշն վարձով տալիս է աղքատ ու կարօտ մարդկանց, որոնք ինչպէս ուզում են, այնպէս էլ բաժանում ու կեղառուում են իրենց բնակարաններն ու խցերը։ Այդտեղ վիտում են թէ աշխատաւոր և թէ պարապ մարդիկ։

Բակի մէջ ամենից ունեորը համարւում է քարաշէն տան վերին յարկում ապրող այն կինը, որին պատկանում է սպիտակեղէններ հարթելու փայտէ գլանը։ Հարկեան լուացարանները մի քանի կօպէկ վճարելով, բանացնում են այդ գլանը, երբ հարկաւոր է լինում, այդ պատճառով էլ առաւօտից իրի կուն նրա բնակարանում անդադար այդ փայտէ գլանի թխթիսկոցն է լսւում։ Այդ կինը առանց նեղութեան ամեն օր շատ թէ քիչ արդիւնք է ստանում, նրանով կերակրում է իր երկու ազգականներին և իրեն էլ մեծ բան է կարծում, որովհետեւ ապրում է առանց աշխատելու ու առանց մէկին գլուխ խոնարհելու։

Նա իրաւունք ունի այդպէս կարծելու, քանի որ միենայն բակում խեղճ կար անող մի կին ամբողջ օրը ասեղին է տալիս. լուացարարը ամբողջ օրը կարմրած այտերով ու պա-

ռաւած ձեռքերով լուացք է անում. անգործ սպասաւորներն արբեցողութեամբ ու աղմուկաներով են զբաղւում. մօտիկ եկեղեցու դռներին քաշ եկող մուրացկանները կուռում, աղմուկ են բարձրացնում... Անկիւններից մէկումն էլ առաւոտից իրիկուն ակնոցներն աչքին բրդի գործուածքներ է կարում ու գործում մաքրասէր պառաւը, որի երեսից բարութիւն ու տիրութիւն է կաթում: Բակի դրան մօտ շեմքին հաւասար գտնուում է պառաւ հրէուհու՝ ջլոտկայի փոքրիկ խանութը:

Ջլոտկային առեւտրի մէջ, նրա փտած ապլանքները սաղացնելու համար, օդնում էին առաջ աղջիկները, յետոյ թոռները, իսկ այժմ—թոռան որդիքը: Իսկ նա ինքը ամբողջ օրը նստած է իւր խանութի դրանը և առաւոտից իրիկուն պատրաստ է ամենքին պատմելու, թէ ո՞վ և ե՞րբ է ապրել այդ տանը, ինչպէս է ապրել և ի՞նչ է պատահել. մի խօսքով շատ չար ու բարի է տեսել այդ պառաւ հրէուհին:

մախաչ զառ բանաւ և պայտա զառ
Բ.

Այդ տանն ապրող մուրացկան կանանցից մէկը մի պուածոտ շատ վաղ գուրս եկաւ տանից, և տեսաւ որ բակի գրան մօտ ընկած է նորածին մի մանուկ՝ կոշտ ու կեղտոտ փալասների մէջ փաթաթած:

Վաղելով գնաց նա և յայտնեց այդ մասին ջլոտկային. Հինգ րօպէից յետոյ այդ ընդարձակ բակի համարեա բոլոր կենողները հաւաքուեցին ընկեցիկ մանկան շուրջը. ոմանք զարմանում էին, թէ ինչպէս են մայրերը սիրո անում երեխաններին դուրս շպրտելու, շատերն էլ զայրանում էին.

— Ա՛խ, ինչ անպիտան մայր է եղել:

— Ի՞նչ ստոր մարդ է եղել հայրը: Ծրջապատողներից՝ աւանակի մէկը բարձր ձայնով ծիծաղեց, նրա մօտ կանգնող մի ծեր մարդ կոշտացած ձեռքերով սրբեց աչքերի արտասունքները. մի խօսքով ամենքն էլ փրդովում էին, ամենքն էլ հառաջում...

— Եատ բարի, բայց, ի՞նչ պէտք է անենք այժմ այս երեխային, հարցրեց վերջապէս ջլոտկան շրջապատողներին: Այդ էր գըլ-

խաւոր խնդիրը, և ամենից առաջ զլոտկան
մոտածեց այդ մասին:

Սյուտեղ հաւաքուած մարդկանցից մէկը
վախվիսելով առաջարկեց, որ երեխային իս-
կոյն տանեն և յանձնեն ոստիկանութեանը.
Այստեղ ինչ ուզում են անենու: Կանայք,
բարձրաձայն, անէծքի հեղեղ թափեցին այդ
մարդու գլխին և նորից խոր հառաջանքներ
բարձրացրին...

Անտէ՞ր արարած.

Ա՞խ, անիրաւ մարդիկ, աշխարհ են
քերում մանկանը և գուրս շպրտում:

Երեկի, ծայրաշեղ չքաւորութիւնը...

Ի՞նչ ուզում էք, ասացէք...

Ասել-խօսելուց անցել է, պէտք է
վճռենք, թէ ի՞նչ ենք անում երեխային:

Ի՞նչ պէտք է անենք, մենք ամենքս
պահպանենք, մեծացնենք մեր մէջը, անհա-
մարձակ ձայնով առաջարկեց մի լուցարար՝
մօտիկ խցերից մէկից:

Ամենքն էլ լուռ նրան նայեցին:

Հեշտ է, ի հարկէ, ասել, որ մենք
պահպանենք ու մեծացնենք, բայց ո՞վ պէտք
է պահի, պատասխան տուեց բակի ունեոր
տանտիկինը, որ մի գուցէ երեխայի պահպա-
նութիւնը իրեն յանձնեն:

— Ի՞նչ հարկաւոր է երկար-բարակ խօ-
սել, վճռական ձայնով ասաց զլոտկան, — երե-
խային մենք ամենքս կպահպանենք:

Երկար շորերի մէջ փաթաթուած հա-
սակաւոր պարագ կաշեգործը վեր առնելով
կոնդալ գլխից մորթէ գլխարկը, սկսեց հեր-
թով ամենին էլ դէմ անել.

Բարեկամներ, ընկեցիկ երեխայի հա-
մար մի՛ խնայէք...

Խսկ ով գժուարանում էր ողորմութիւն
տալու, նա հարբեցողութիւնից ուռած աչ-
քերով խորամանկ կերպով յորդորում էր.

— Նուտ արա, թափ տուր գրպանդ:

Խրար ետեկից փողերը թափւում էին
գլխարկի մէջ: Ումանք տալիս էին ինչ որ կա-
րող էին կարեկցութիւնից դրդուած, ումանք
էլ փառասիրութիւնից: Ունեոր տանտիկինը
ոռւբլիանոց մի թղթագրամ գցեց գլխարկի
մէջ և ապա հպարտութեամբ շուրջը նայեց...

Ամեն մէկն էլ մի քանի կոպէկ ողորմու-
թիւն տալով, կարծում էր, որ բանը վերջա-
ցած է և երեխան ապահովուած, ուստի և
կամաց կամաց սկսեցին ցրուել:

Երեխայի մօտ մնացին միայն այն մու-
րացկան կինք, որի գրկին էր երեխան, կաշե-
գործը գլխարկը ձեռքին և թերը թրջուած

լուացարարը: Սի քիչ հեռու կանգնած էր
Զլոտկան:

— Ա. Երեխան, ասաց մուրացկան կիւնը, լուացարարին դառնալով,—ես պարապ չեմ, շուտով պատարագը կվերջանայ, շտապում եմ Եկեղեցու գուռը։ Դու առանց այն էլ կերակրում ես քո Երեխային, այս ընկերիկի համար էլ մի բան կմնայ։ Կաշեգործը իսկոյն և եթ հաւաքուած փողերը շուտու տուեց լուացարի գոգնոցի մէջ։

—Վեցըրու երեխային—վիսփաց նրա
ականջումը թլուկան։—Ես կաշխատեմ, որ
այսօրուայ նման ամեն աժիս երեխայի համար
մի բան հաւաքեմ։ Ես կաշխատեմ, և յոյս
ունեմ, որ կտան։ Դիտես, որ ես ամենքի
համար էլ հարկաւոր անձնաւորութիւն եմ։

— Իսկ ձեզ, ձեր քաշած նեղութեան
համար ես մի լիքը բաժակի համեցէք կանեմ,
ասաց պառաւ հրէուչին, դառնալով կաշե-
գործին: Դնանք, կարծում եմ, որ չէք մերժի:

Նա ձեռքը թափ տուեց, և որպէս թէ
ակամայ պարտաւորուած, չետեւ զլու-
կալին:

—Կարծէ՞ մ, Ճանապարհը այսպէս է:
Նատ էր սիրում խմել այդ բարի մարզը:

Տարիներ էին անցել այդ օրու անից:

Միսից սկացած, ցածրիկ առատաղով
փոքրիկ մի սենեակի մէջ, որի մեծ մասը բրու-
նում էր ահագին վառարանը, զրուած էր
երկարաձև եռոտանի մի լուացարան, որից շա-
բունակ հոտած գոլորչի էր բարձրանում:

Ամեն օր, համարեա առանց հանգստութեան լուացարանի առաջը կանգնած էր կարմրած լուացարարը. երբեմն միայն նա կոշտ թեքովը սրբում էր երեսի քրածինքը և նորից ձեռքը կոխում սապնափրփուրի մէջ։
Նրա մօալ՝ գետանին չոչ էր անում և նւում փոքրիկ մի մանուկ. երկու ուրիշ աւելի տարիքով երեսայ էլ աղջիկ ու տղայ անդադար դուրս ու տուն էին անում, աղմբ-կում կամ գանգատում էին իրարից և կամ թէ բարձրաձայն ծիծաղում ու իրար ետեից վազվզում։

Անկիւնում նատած էր և մի փոքրիկ աղ-
ջիկ պատառոտուն շապիկ հազին և զուար-
ձանում էր վառարանում բորբոքուող կրա-
կով, որից կայծեր էին դուրս թռչում... Սե-
ռու խոշոր աչքեր ուներ նա և դէմքի նուրբ

գծագրութիւն. Նրա թախծոս երեսը ժըպառում էր կրակին նայելիս, իսկ երբ կրակը նստում էր, կարծես նրա դէմքն էլ տիրում էր... Այդ փոքրիկ աղջիկը քնկեցիկ Խլիանկան էր:

Կեսօրին լուացարարի մեծ երեխայքը տուն էին հաւաքւում և քաշքշում էին մօր փեշերքը. իսկ նա ձեռքերը սրբելով, սպասով լիքը ամանը զնում էր երկար նստարանի վրայ: Այդ միջոցին անկիւնից վեր էր քաշւում փոքրիկ Խլիանկան և նա էլ խոնառ գետնին քարշ գալով, դէպի տաք կերակուրն էր շտապում: Բայց հէնց որ ձեռքը դդալին էր մեկնում, երեխաներից մեծը՝ Անտէկը գըշ գալով խփում էր նրա ձակատին և բարձրաձայն ծիծաղում: Երեխան ձարպիկ կատուի նման իսկոյն նստարանի տակն էր մտնում:

— Թո՞ղ նա էլ ուտի—բարկանում էր մայրը որդու վրայ, եթէ նկատում էր նրա անպիտան վարմունքը:

Բայց խեղճ կինը ժամանակ ունէր հետեւելու նրանց արարքներին:

Լուացարարի փոքրիկ աղջիկը՝ Անկան սպասը սառցնելով, ինամքով կերակում էր իր փոքրիկ եղքօրը, իսկ սպասի միջի գետնախնձորները նստարանի տակն էր դցում,

ուր Խլիանկան իսկոյն և եթ հաւաքում էր: Անտէկին էլ կշանալուց յետոյ, ընկեցիկ երեխային ձայն էր տալիս ու կանչում ինչպէս շանը.

— Խլիանկա, բռնի, հօպ...

Երեկոյեան դէմ երեխայքը մի մի կտոր հաց էին ուտում և ապա սպառկում էին քնելու:

Վերջերս երեխաների մայրը առհասարակ գիշերները ուշ էր քնում: Նա կամ սպիտակեղէններ էր հարթում, կտոր լեղկում և կամ երեխայոց ցնցոտիններն էր կարկատում... և երբեմն էլ ականջ էր զնում, թէ արդեօք վողոցից հարբած մարդու երգի ձայն չի լրաւում: Երբ լսում էր այդպիսի մի ձայն, իմանում էր, որ ամուսինը գալիս է և տանը փոթորիկ պէտք է բարձրացնի: Նրա ամուսինը խոհարար էր, գուրսը զանազան հանդէսներում, հարսանիքներում և հոգեհայերին կերակուրներ էր եփում, ձաշ ու ընթրիք պատրաստում, իսկ իւր ընտանիքը միտն էր բերում միայն այն ժամանակ, երբ հարբում էր ձեռքին ունեցած կոտէկներով, և միւս օրն էլ ոչինչ չէր ունենում խմելու:

Կինը լսելով նրա խռպոտ ձայնը և պատէպատ ընկնելը, իսկոյն շտապում էր իւր

դառն աշխատանքով վաստակած կոպէիները
թագցնել մի տեղ:

Խոհաբարը տուն գլորուելով, դորգուում
էր, փողոյային հայհոյանքներ թափում կնոջ
գլխին, փող էր պահանջում նրանից և յետոյ
էլ տուր ու գմինոյը սկսում... Սարսափելի
իրարանցում էր տեղի ունենում. կինը ձչում
էր, աղաւում, հրում. լաց ու կոծ էին բարձ-
րացնում և քնից արթնացած երեխայքը...
Անտէկը ատելութեամբ վառուած հօր դէմ
և սպառնալից աչքերով մօրը պաշտպանում
էր... Եւ այս ամենը սովորաբար վերջանում
էր նրանով, որ այդ հարբան անպիտանը
գտնում էր կնոջ թագցրած կոպէիները: Շատ
անգամ խեղճ կինը փողերը առաստաղի տախ-
տակների ետևն էր պահում, բայց նա այդ-
տեղ էլ էր գտնում:

Իւլիանկան սարսափում էր այդ մարդուն
տեսնելիս: Նա անկողին չունէր և քնում էր
այն անկիւնում, որտեղ անց էր կացնում ամ-
բողջ օրը: Գորգուոցի ու Ճիշերի վրայ զարթ-
նում էր երեխան և ամրադ մարմեռով գող-
գողալով նայում էր տուր ու գմինոյն. Նա
տեսնում էր, թէ ինչպէս այդ հարբանը փո-
ղը գտնելուց յետոյ մի անգամ էլ վերջին
հարուածը հասցնելով կնոջը, դուրս էր գը-

նում և այնպիսի սաստկութեամբ վրայ բե-
րում դուռը ետեից, որ պատերը շարժում
էին. տեսնում էր և այն, թէ ինչպէս լուա-
ցարարը մարդու գնալուց յետոյ երկու ձեռ-
քով ծածկելով արիւնուիկ երեսը, երկար
ժամանակ հեկեկում էր:

Մի անգամ կատաղած խոհաբարի սե ու
կոլոր աչքերը ընկան անկիւնում կուչ եկած
փողերիկ աղջկայ սարսափահար դէմքին...
Կպաւ կնոջը և պահանջեց այն „հաւաքած“
փողերը, որը նա ստանում էր „այդ զզուելի
ընկեցիկին“ պահելու համար: Կինը երդւում,
կրակն էր ընկնում, որ „վաղուց արդէն ոչ
ոք մի կոպէկ չի տալիս, որ...“

Խոհաբարը յարձակուեց երեխայի վրայ.
Խլիանկան ճպճպացրեց աչքերը և կծկուեց...
Ուժեղ բազուկով բռնեց նրա շապկից և մի
քանի քայլ առաջ գալով, դռնից դուրս
շպրտեց:

Դուրսը վշտմ էր աշնանային ցուրտ
քամին և հեղեղի նման անձրե էր գալիս.
սե ու թանձր ամպերը բռնել էին երկնքի
երեսը. վախից բռլորովին իրեն կորցրած,
երեխան ընկաւ թաց խոտի վրայ և ուշքի
եկաւ միայն այն ժամանակ, երբ գետնի խո-
նաւութիւնը և ցուրտը ազդեցին նրան. նոյն

իսկ բակի կաղնիներն էլ խշշում էին քամու ձեռքից և կարծես թէ մի ինչ որ վատ բան էին գուշակում: Խլիմանկան սարսա՛ փեց...

Երկար ժամանակ երեխան ուշքի չեր դալիս, բայց վերջապէս զիշերուայ այդ թանձր մժութեան մէջ բակի հեռաւոր անկիւնում ճրագի աղօտ լոյս նկատեց և վախվախելով կամաց, խոտերի մէջ խճճուելով, ընկնելով և վեր կենալով և չորս կողմը նայելով, անցաւ ամբողջ բակի միջով դէպի ճրագլոյսր:

Դ.

Բակի անկիւնում գտնուած բնակարանը լուացարարի սենեակից աւելի փոքր էր, խունաւ էր և ցուրտ (որովհետեւ միշտ չէին տաքայնում), բայց շատ մաքուր էր և կարգին. պատերը սպիտակին էին տալիս. փայտէ մի մահճակալ էր զրուած, որի գլխավերելը խաչ կար, վրան էլ հասա բարձ. մահճի տեղ մի բան էր զցած և խնամքով ծածկուած էր հին, խունացած ծածկոցով. պատուհանի առաջը սեղանի վրայ հասարակ մի լապտեր էր զրուած բոլորովին մաքուր և խնամքով սրբած. սեղանի մօտ զրուած էր մի դատարկ

մնդուկ, ծածկուած հին, շքեղ գորգի մի կտոր ցնցոտիով, իսկ նրա վրայ նստած էր անսատամ պառաւ կինը ակնոցներն աչքերին. Նա մարմնով փոքր էր և վտիտ, հագին կար ու բամբակած վերարկու: Եռանդով աշխատում էր գիշերները, գործում, կարում էր: Նրա գունատ ու չորացած դէմքի կնճիռները կարծես թէ հաւաքուել էին յոնքերի շուրջը և գէմքին այնպիսի արտայայտութիւն էին տուել, որ նայողին իսկոյն հասկացնում էին, թէ որքա՞ն նեղ ու չարքաշ օրեր է տեսել այդ կինը:

Յանկարծ պառաւը գլուխը վեր բարձրացրեց. նրան այնպէս թուաց, որ մէկը դուռը չարչարում է...

— Յի՞սո՞ւս ու Քրիստոս ս... մրմնջաց պառաւը, երեսը խաչակնքելով:

Դուան ետեից երեխայական լացի ու հեկեկանքի ձայն լսուեց:

— Ո՞վ է:

— Խլիմանկան, պատասխան լսուեց երեսայական ձայնով:

Պառաւը գուռը բաց արեց:

— Ի՞նչ ես կէս գիշերին վազվզում այս քամուն, անձրեին, ասաց պառաւը, ներս թողնելով երեխային:

— Երեկի տանը ձեզ հսկող չկայ... մի
քիչ առաջ էլ ձեր Անտէկը քար դցեց վրաս
բաց պատուհանից, իսկ այժմ... Ինչո՞ւ ես
եկել դու:

— Դուրս շը՝ պէ՛ր-տե՛ցին, — հազիւ
կմկաց լացուկամած երեխան:

— Ինչպէ՞ս թէ դուրս շպրտեցին... Տէ՛ր
Աստուած... Պառաւը շուարած էր մնացել. նա
յետ նստեց մնդուկի վրայ և ուշադրութեամբ
լաւ դիտեց իւր անտեսնկալ հիւրին: — Ո՞վ
դուրս շպրտեց քեզ... հը.

— Տա՞նտէրը.

— Տանտէ՞րը, այսինքն լուացարարի մար-
դը՝ Յակովը, այդ հարբա՞նը, որ իւր երգե-
րովը գիշերները խաղաղ մարդկանց քնահա-
ռամ է անում և բակի մէջ էլ աղմուկ ու
փոթորիկ է գցում... Կնոջն էլ ծեծե՞ց նա:

— Այո՛, ծեծեց:

— Տեսնո՞ւմ էք, էլի ծեծել է... թէ Աս-
տուած կայ, նա բանտից չի ազատուի...
Իսկ քեզ, մանո՞ւկս, ուղղակի վերցրեց և
դուրս շպրտեց... այս անձրեխն ու ցըտին,
այսպիսի մութը գիշերը... չը... լա՛ւ...
բայց այդ ինչպէ՞ս է, որ դու ամբողջ բակը
բայց այդ ինչպէ՞ս է, որ մօտ եկար... Երեկի նրա հա-
նցար և ինձ մօտ եկար...

մար, որ ես երեկ քեզ սպիտակ հաց տուե-
ցի... Կաթն ուղղում ես այժմ:

— Ուզո՞ւմ եմ, բարձրաձայն և ուրախ
պատասխանեց Իւլիանկան:

Պառաւը տնքտնքալով սեղանի տակից
հանեց երեսը թղթով ծածկած կաթնի ա-
մանը և տուեց երեխային:

— Ա՞ռ, կէսը խմի՛, բայց աւելի չխմե՞ս,
նախազգուշացրեց պառաւը, — առաւօտուայ
համար էլ պէտք է պահել:

Երեխան երկու ձեռքով բռնել էր ամա-
նը և մեծ ախորժակով խմում էր կաթը,
զարմանալով միենոյն ժամանակ, որ իւրեն
այդպիսի քաղցրահամ խմելիք են առուել...
բայց հազիւ էր կէսը խմել, որ պառաւը խ-
կոյն ամանը յետ քաշեց երեխայի բերանից
և նորից պահեց սեղանի տակը:

— Ինչո՞ւ ես դողդողում; Հարցրեց պա-
ռաւը երեխային — մրսո՞ւմ ես, լուացարարի
մօտ էլ ուրիշ շոր չունե՞ս, չէսց միշտ այդ
շապկի մէջն ես լինում:

— Միշտ այդպէս եմ լինում:

— Տեսնո՞ւմ էք... ի՞նչ անեմ, որ ես էլ
ոչինչ չունեմ քեզ տալու... Վերջին ձունձն
է, որ դցել եմ ուսերիս... Օ՛ֆ�'ֆ�'... ի՞նչ
կմտածէի, թէ պէտք է այսպէս աղքատա-

նամ... Մի ժամանակ ես էլ հարուստ ու պատուաւոր կին էր. տունս ամեն բարիքով լիքն էր և ամենքն էլ յարգում, պատում էին քաղաքային դատաւորի կողը... Ի՞նչ անեմ, այս վերջին փալասն էլ քեզ տամ:

Այս խօսքերն ասելով խեղճ պառաւը վերցրեց իւր աղքատիկ անկողնու վրայից տաք ծածկոցը, որը նրան վերմակի տեղ էր ծառայում, և փաթաթելով նրա մէջ երեխային, տեղաւորեց վառարանի և պատի մէջ տեղը:

— Է՞՛ հ, ախ քաշեց պառաւը: — Հոգեակս, ուզում ես նստի, ուզում ես պառկի քնելու, խսկ ես դեռ էլի պէտք է աշխատեմ... Դու իմ ծածկոցը Խլեցիր, ես ի՞նչ պէտք է ծածկեմ... Այս հագիս պատառուտած վերարկուն... Մուշտակս չեմ ծածկի, ափսո՞ս է. վաշ, վաշ, վաշ... Քնիկ, հոգիս, Աստուածքեզ հետ... Մի վախենայ, Յակովն այստեղ չի գայ...

Խլիանկայի քունը չեր տանում: Նա շարունակ նայում էր իւր նոր խնամակալուհուն, որը նորից գործի նստեց և սկսեց քթի տակըն իրան վինթփնթալ:

Պառաւը սովորութիւն ունէր, որ երբ մտքով բան էր անց կենում, բարձրաձայն ինքն իրան խօսում էր.

— Այս երեխան խանգամեց ինձ, ինքն իրեն խօսում էր, ժամանակ խլեց. դեռ էլի պէտք է աշխատեմ, քանի որ եկեղեցու ժամացոյցը տասնումէկը չի խփել... Բամբակէ թելի գործուածք եմ անում... Գիշերները բրդի թել չեմ բանեցնում, որովհետեւ ձրագի լուսով գոյները չեմ կարողանում զանազանել... Ա՛խ, ա՛խ, ա՛խ, ափսո՞ս իմ աչքեր, էլ լաւ և չեմ տեսնում:

Նստած էր եւ աշխատում էր... Բայց ահա եկեղեցու ժամացոյցը խփում է. «մէկ» կամ «երկո՞ւ... ե՞րեք և վերջապէս «տա՞սնո՞ւմէկ» կամ «երես»:

Պառաւը ձեռքի բանը փաթաթեց, ակնոյները վերցրեց, զգուշութեամբ սրբեց և դարձեալ սկսեց ինքն իրեն խօսել:

— Երանի՞ էր այն օրերին, երբ իմ տանը հիւրերով շրջապատուած, նստում էի մինչև գիշերուայ ժամի մէկը, երկուսը... Ի՞նչ կսպաէի այսպիսի օրերի... Բայց ի՞նչ արած, փաշոք Աստուծոյ... միայն ցաւս այն է, որ աչքերս, աչքերս են փչանում... Նրա կողքին անհանդիստ քնի մէջ զառանցում էր երեխան.

— Խլիանկային դո՞ւրս շպրտեցին, դո՞ւրս...

— 22 —
Ե. առ ոչ նուոյ մըր

Փիշերն անցաւ և երեխան առաւտօտեան աչքերը բանալով խնդաց, երբ տեսաւ, որ արեն ընկել է լուսամուտին... Լուսաբացին թռչուններն երգում են, անտառում, կանաչ խոտերի մէջ էլ խժվածում են Աստուծոյ ստեղծած արարածները: Երեխան էլ ուրախանում է, երբ պարզ ու պայծառ օդ է բացւում:

Պառաւը դէպի խաչը դարձած աղօթում էր. «Հայր մեր» և այլն:

— «Ամէն», վերջացրեց նա երեսը խաչակնքելով և յետ դարձաւ լսելով Խւլիանկայի ծիծաղը: — Օհօ, սի՞ բելիս, գու արդէն զարթնել ես... Մինչև անգամ ծիծաղում էլ ես... Լա՞ւ քննեցիր... Զէի՞ր մրսում... Իսկ այս ի՞նչ է:

Պառաւը ցոյց տուեց կաթնով ամանը. Երեխան վեր թռաւ և մօտ վազեց պառաւին:

— ԱՌ, խմի՞ր, խմի՞ր, հոգիս... Միայն իմ բաժինն էլ թող, ասաց պառաւը և դլուխը ծածկեց: Այդ է իմ ունեցած չունեցածը մինչև ճաշ: Ես էլ շատ ուրախ կլինէի, որ քեզ շատ տայի, բայց ի՞նչ անեմ; որ չունեմ... Մի ժամանակ ես թէյ էլ էի խմում,

թանձր սերով սուրճ էլ... Իսկ այժմ ուրամիւ եմ լինում, եթէ գոնէ երեսը քաշած կաթն եմ ճարում... Ի՞նչ արած. աշխարհիս բանն այդպէս է, մարդ բարձրանում էլ է, իջնում էլ... Ժամանակով ես բարձրացել էի, բայց այժմ լնկել եմ, և ի հարկէ այլ ևս երբէք չեմ բարձրանայ... Բայց դո՞ւ... Ո՞վ է իմանում... Գու կարող ես բարձրանալ... Դեռ զու շատ պէտք է ապրես: Բայց այժմ... Գու այդ մի շապկից աւելի ոչինչ չունե՞ս... Կգնամ իմ ծանօթ հարուստներից շոր կիսքնդրեմ... Ես հարսւատ ծանօթներ շատ ունեմ, որոնց ծախում եմ իմ զործուածքները... Ի՞նչ արած, ես ինքս եմ ման գալիս և ծախում... Միայն նրանց սանդուխներն են ինձ նեղացնում: այլ ևս չեմ կարողանում սանդուղներով բարձրանալ... Իսկ միյարկանի տների բակերումը շներ են պահում; որոնք ներս մանողի շորերը զգգում են... Նրանցից մէկը մի անգամ ոտքս կծեց և ես ամբողջ շաբաթ տանից չէի կարողանում գուրս գալ... Այն անպիտան կոպիտ սպասաւորներն հօ՛, հայհոյում են «աղքատ», «մուրացկան» են անուանում և գուրս են անում բակիցը. ԱՌի... Ի՞նչ ասեմ... էս օրերին էլ պէտք է հասնէի:

Իւլիանկան բերանաբաց լսում էր, թէ
ինչպէս պառաւը տրանջում էր և պատմում
սրտին ծանրացած վշտերը:

— «Մուրացկան», մի քանի րոպէ լոեւ-
լուց յետոյ բացականչեց պառաւը: Նրա հան-
գած աչքերը փայլում էին բարկութիւնից:
— «Մուրացկան», ինչո՞ւ եմ մուրացկան, քա-
նի որ իմ օրական ապրուստիս կոպէկները ազ-
նիւ ձանապարհով վաստակում եմ: Ընչո՞վ են
վատ իմ ձեռագործներս խանութներում քաշ
արած ձեռագործներից, որոնցով գրաւում ու
խարում են մարդկանց... նորերս փոքրիկ այն-
պիսի գորգեր եւ վերմակներ էի գործում,
որ տեսնելու բան էր... Բայց ա իս, աչքերս
փչանո՞ւմ են, փչանո՞ւմ: Տէրը մի՛ արասցէ,
եթէ բոլորովին կուրացայ, ի՞նչ կլինի իմ
օրս:

Կուրանալու երկիւղն այնպէս սարսա-
փեցրեց նրան, որ գէմքի վրայ արտայայտուեց
այդ սարսափը: Նա շտապով ուսերին ձգեց
այն ծածկոցը, որի մէջ գիշերը փաթաթել
էր երեխային և գլխին դրեց սև հասարակ
գլխարկը:

— Դուրս գնա այժմ,—ասաց պառաւը
երեխային: — Ես պէտք է քաղաք գնամ և
դուռը կողպելու եմ: Երեկոյեան էլի կաթը

կտամ կխմես և ինձ մօտ կքնես: Ես տանը
ձաշ չեմ պատրաստում... Մի ծանօթ կին
ունեմ, գնում եմ նրա մօտ, որքան որ կա-
րող ենք, ընկերովի բրինձ, գետնախնձոր ենք
առնում և սպաս եփում... իսկ երբ գործ
շատ եմ ունենում, տանն եմ ձաշում... Դեհ
գնա, ա զջիկս... Հանգիստ կաց... Կաշխատեմ
երեկոյեան քեզ համար ուտելու բան բերել...
Մնաս բարով...

Երկուսն էլ դուրս եկան. պառաւը գնաց
փողոց, իսկ Իւլիանկան ծառին յենուելով՝
երկար ժամանակ կանգնած էր շուարած և
չգիտեր, թէ ուր գնայ: Այլես նրա երեսին
ծիծաղ չէր երևում, որովհետեւ աշնան ցուրտ
քամին փչում էր և աշնանային արեգակն էլ
տաքութիւն չունէր: Կանգնեց, կանգնեց և
վերջապէս քաշուեց իւր նախկին տաք բնա-
կարանի կողմը... Մէկ, ձեռքը մեկնում էր
դռանը, մէկ էլ էլի յետ էր տանում:

Դուռը բացուեց. սենեակից դուրս եկաւ
լուացարարը ջրի դոյլերը ուսին: Նրա գոգ-
նոցն ու շրջազգեստը պատռուտուած էին, երե-
աք տեղտեղ կապտած և չանգուտած, աչքերն
էլ ուռել էին...

— Է՞լի սեցար այստեղ, գոռաց նա Իւ-
լիանկի վրայ: Իմ ցաւերս քի՞չ են, դու էլ ես

աւելանում: Հարազատ որդիս ե՞ս, ի՞նչ է:
որ քեզ էլ կերակրեմ և ցաւերդ էլ քաշեմ...
Կո՞րի այստեղից:

Նա ձայն տուեց Անտէկին, հրամայեց
որ ներս չթողնեն այդ «ձրիակերին», և ինքը
գնաց ջրի: Անպիտան երեխան արծուի նման
յարձակուեց իւր որսի վրայ.

—Կորչե՞ս թէ չէ այստեղից, զզո՞ւելի
ընկեցիկ. ասաց ու բուռնցըներ հասյնելով
քշեց այդ խեղճ որբին: Նա հեռացաւ: Բայց
այդ բոպէին ով որ նայէր նրա աչքերին,
կնկատէր թէ ինչպիսի մի անզօր բարկութիւն
էր վառւում նրանց մէջ...

Լուացարարը վերագառնալով հեռու ջըր-
հորի մօտից, տեսաւ որ Խլիանկան գեռ
կանգնած էր այն անկիւնում, ուր քշել էր
նրան Անտէկը: Խեղճ կինը մի բոպէ կանգ
առաւ, նայեց երեխային, յետոյ ներս մտաւ
խրձիթը և մի կտոր սև հաց բերեց տուեց
նրան:

—Առ, —հացը դէմ արեց նա Խլիան-
կին, —ամբողջ օրը հերիք է: Երբեմն-երբեմն
էլի հաց կտամ քեզ, բայց Աստուած փրկի,
եթէ սենեակս ես մտել... Ճիպոտով կաշիդ
կպոկեմ և բանջարների մէջ կնստացնեմ..
Լաւ իմացիր, հա:

այս իմաստինինը... Առ նախար
պատ սկսում է այդ գոյացութիւնը առ ա
մասնաւծ ին ու այդպիս մոցուու ու նու

Այդ օրուանից էրեք չորս ամիս էր անց
կացել: Մի անգամ պառաւը տուն էր վերա-
գառնում գլւր ծանօթ պարոններին» այցե-
լութիւն անելուց յետոյ:

—Բարեւ ձեզ, տիկին. ի՞նչպէս էր, լո՞ւ
էր, —հարցրեց Գլտկան, որը այդ միջոցին
նստած էր իւր խանութիւ շէմքին: —Մեր ըն-
կեցիկ երեխային այժմ դո՞ւք էք ձեզ մօտ
պահում: Պառաւը մոլորուեց:

—Ըստ բացականչեց պառաւը, ձեռա-
քը շարժելով. —«աստ ծ է, մկան ծակը նեղ
էր, ցախաւելն էլ պոչից կապեցին»:

—Հա՞ , ի՞նչ անեմ, տիկին, գիտեմ որ
նեղութիւն է... Նատ լաւ եմ հասկանում,
որ գուռք ինքներդ էլ օգնութեան կարօտ էք: Բայց չէ որ երեխային գուռք էք կերակրում
և հէնց ձեզ մօտ էլ քնում է:

—Կերակրում եմ... Այս, կերակրում
եմ, եթէ մի բան ունենում եմ, իսկ ինձ մօտ
քնացնում եմ, որովհետեւ գուրու մնալ իմ
կարող, ցրտին չի գիտնայ... Այսինքն, իմ
սենեակում էլ զրսի նման ցուրտ է... Է՞ս,
ով կմտածէր, որ այս օրերին էլ կհասնեմ...

— «Պահպատմ եմ», — վիճակնթալով պառաւը մօտեցաւ իւր խցին: — Ինչպէս կարող եմ ես ուրիշին պահել... Այս, մի ժամանակ ես օգնում էի որբերին, կերակրում, հազցնում էի և մինչև անդամ ուսման էլ էի տալիս... Բայց այժմ... Ո՞վ կսպասէր... Այս, Տէր Աստուած, էլլի՛ մի նոր ցաւ աւելացրիր գլխիս...

Դուռը բանալով, պառաւն աշխատում էր պինդ պահել ձեռքին բռնած թղթէ կապոցը, որի մէջ փաթաթած երկու հատ զետնախնձոր և մի քանի կտոր եփած միս էր բերել:

— Այս նրա բաժինն է, — մրմնջաց ինքնիրան պառաւը: — Իւրիանկա. ուր է կորչում միշտ այդ աղջիկը, Իւրիանկա:

Երեխան պառաւի ձայնը լսելով, իսկոյն տուն վազեց և շատ շուտով կերաւ վերջացրեց նրա բերած կերակուրը. իսկ պառաւը նստելով սնդուկի վրայ, պարկիցը հանեց փողոցումը գնած բրդէ թելի կծիկները:

— Դու էլ բանի նստի, ասաց պառաւը երեխային: — Այս, այստեղ, նստիր գետնին դիմացս և գուլպադ գործի:

Իւրիանկան արդէն ընտելացել էր այդ խրատներին, ուստի և իսկոյն նստեց:

— Ուղիղ բռնի թելը... մատիդ փաթը-թիր... այ այսպէս, — իրատում էր պառաւը երեխային դէպի նրան կուցած... — ձաղը լաւ բռնի... հը, հիմա անցկացրու... հա այդպէս... Որ խելօք լինիս, ես քեզ շատ բան կսովորցնեմ: գուլպայ գործել, Աստուծուն աղօթել... Է՛հ, մնացածն էլ թող ուրիշները սովորցնեն: Հապա մի կրկնի հետո տեսնեմ: «Հաւատում եմ, միակ Աստուծուն»...

— Հաւատում եմ միակ Աստուծուն, — շնջաց երեխան առանց գլուխը բարձրացնելու. աչքը ձաղից չէր հեռացնում, որովհետեւ չարչարւում էր և չէր կարողանում ձաղը անց կացնել թելի նեղ կշկուռի մէջ...

— «Մեր Հօրը»:

— «Մեր Հօրը»:

— «Որ Ամենակարող է»:

— Որ Ամենակարող է, — կրկնեց Իւրիանկան:

— Հասկանում ես, ինչ կնշանակի «ամենակարող»: Մենք մեր Աստուծուն ամենակարող ենք անուանում, որովհետեւ նա ամեն բան կարող է, նրա համար ամեն բան հնարաւոր է:

Երեխան թաթերը վայր թողեց ծնկներին և աչքը ձգեց իւր ուսուցչուհուն:

—Ասել է թէ, Աստուած կարող էր այնպէս անել, որ ես բակի դռանը ըլինէի ընակած, այլ կաշեգործի կամ ճախարակագործի դռանը... ճախարակագործի երեխայըը ինչը լու են ապրում: Ինչու Աստուած ինձ այդպէս անտէր թողեց:

—Տէր Աստուած, այս ինչ հարցեր է տալիս այս երեխան,—շշնջաց բարի պառաւը շփոթուած և ապա բարձր ձայնով սկսեց խրատել. —Ա մ' ն բան կարող է: Նա անսահման ողորմած է և բարեգութ... Նա կամեցել է, որ դու լաւ վիճակի մէջ լինես, բայց վատ մարդկանց ձեռքն ես ընկել...

—Բայց ՞վ է ինձ բակի դրանը վայր զցել:

—Քանի՛ հարց ու փորձ անես... Գիտեսքեզ ինչ կանեմ, —ձեռագործի մեծ կառթը թափ տուեց վրան պառաւը... Ո՞վ է եղել, ի՞նչպէս է եղել, ինչու են այդպէս արել, ինչու համար... Լաւ, վատ այդ է եղել Աստուածոյ կամքը, մենք պարտաւոր ենք խոնարհել նրա առաջը, հասկանում ես այդ... Պէտք է խոնարհես:

—Խոնարհում եմ—հառաչեց երեխան:

—Ապրես, —դոչեց նրան պառաւը.—Պէտք

է խոնարհես, որդիս, հապա... Տեսնում ես ես ինչ նեղ օրերում եմ ապրում, բայց երբէք չեմ տրանջում և Աստուածոյ փառքը բերանից չեմ պակասեցնում: Միայն երեխն ինձ ու ինձ տիրում եմ և զարմանում, թէ ինչ կեանք էի վայելում երիտասարդութեանս օրերին և ինչպիսի կեանք եմ վարում այժմ... Ե՛հ, ՞վ կսպասէր: Հայրս ու մայրս շատ բարի մարդիկ էին. ես օժիտով ամուսնացայ... ամուսինս մի օրինաւոր և բարեհոգի մարդ էր. ամենքը նրան յարգում էին... Մենք ապրում էինք միասին, ինչպէս թագաւոր և թագուհի... Միայն Աստուած զաւակ չտուեց մեզ... Բայց հինց որ ամուսինս մեռաւ... կամաց-կամաց մեր ունեցած չունեցածը դնաց, խակ ծնողներս էլ, չգիտեմ ի՞նչ եղան... Այսուհետեւ ես իմ մատներիս աշխատանքով էի ապրում... Նատ թանկաղին բաներ են մարդու համար աչքերն ու ձեռները... Այժմ միայն այս եմ խնդրում Աստուածուց, որ աչքիս լոյսը խնայի... Սարսափնում եմ, երբ մտածում եմ, թէ ի՞նչ կլինի օրս, եթէ բոլորովին կուրանամ... Աղջիկս, երբ աղօթքը կը սովորես, դու էլ աղօթի Աստուածուն, որ աչքիս լոյսը խնայի, գոնէ նա կլսի քո արդար բերանով...

— Կաղօթեմ, կաղօթեմ, խոստացաւ իւ-
լիանկան:

Ե.

Այդ օրուանից ամիսներ էին անցել:
Աստուծոյ ստեղծած սովորական օրերից մէկն
էր... ժամաժանքն արդէն ընկել էր և պա-
ռաւի աչքերը լաւ չէին ջոկում, ուստի և
նա հաւաքեց բրդի թելերի կծիկները, լապ-
տերը վառեց և ձեռքն առաւ բամբակէ ձե-
ռագործը:

— Ա' իւ, ինչ լաւ կլինէր, որ հիմա թէյ
ունենայինք և տաքտաք իւմէինք. ցուրտ է
շատ, — ասաց պառաւը ժպտալով: — Ցրտից
ոսկորներս էլ են փետացել... Բայց ինչ ա-
րած. սև ըլի աղքատութեան երեսը, տաք
զրի էլ ենք կարօտ մնացել... Աղջիկս, այդ-
տեղ յատակի վրայ արդէն մութն է, չես կարող
գործել. ձեռքիդ բանը ցած դիր և արի մօտս.
Հիմա էլ շարունակենք մեր սկսած աղօթքը,
արդէն ժամանակն է, պէտք է շուտով սովո-
րես... Ասա. «Եւ թող մեզ...»

— Եւ թող մեզ...

— «Զպարտիս մեր»...

— Գիտե՞ս այդ ինչ է նշանակում... դրա-
նով խնդրում ենք Աստուծուց, որ մեր յան-
ցանքները ների և յետոյ աւելացնում ենք.
«Որպէս և մեք թողումք մերոց պարտա-
պանաց», այսինքն մենք էլ պարտաւոր ենք
մեր պարտապաններին ներելու, իսկ մեր պար-
տապանները նրանք են, ովքեր որ մեզ վի-
րաւորում են ու նեղացնում...

— «Որպէս և մեք թողումք մերոց պար-
տապանաց»... կրկնեց միւնոյն բաները երե-
խան և կանգ առնելով, գարձաւ պառաւին
և քաշուելով ասաց. — Մայրիկ, ես չեմ ների...
չեմ մոռանայ...

— Ո՞ւմը չես ների, ի՞նչ չես ների, —
զարմացած հարցրեց պառաւը:

— Անտէկին աշխատ է... Ամենեխն չեմ ների
Անտէկին, բացականչեց երեխան — ոչ մի օր չե-
լինի, որ նա ինձ չզբնի, չզրկի...

— Ամօթ է, ամօթ, աղջիկս, — պառա-
ւը սկսեց նախատել նրան. — Գիտե՞ս ինչ վատ
նշան է, երբ երեխան այդպէս յիշաչար և
վրէժինդիր է լինում: Ճշմարիտ է, Անտէկը
թոկից փախած երեխայ է, չափից գուրս ան-
պիտան է, բայց պարտաւոր ենք նրան էլ նե-
րելու, որովհետեւ մեր Տէրը այդպէս է պա-
տուիրում: Իսկոյն ներիր նրան...

— ԶԵՄ ՆԵՐԻ, չԵ, չԵ, չԵ. կրակուած և
վճռական ձայնով մի քանի անդամ կրկնեց
Խլիանկան: — ԳԵՄԻՆը մոնեմ ես, թէ որ նե-
րեմ: Սպասիր մեծանամ, թող Աստուած իմ
պատիժո տայ, թէ որ նրան մի լաւ չջար-
դեմ: Այնպէս ջարդեմ, այնպէս որ
Յակովը իւր կողջը ջարդում էր, որ նա ի-
մանայ...

Նա սեղմել էր իւր փոքրիկ բուռնցքը
և բարձրածայն թափում էր այն անէծքներն
ու հայհոյանքները, որոնք լսել էր բակի մէջ
քաշ գալիս, թէ խոհարարից, թէ լուացա-
րարից, թէ կաշեգործից և թէ Զլոտկայից...
Բարկութիւնից և զարմանքից պառաւը
ձեռքի բանը վայր գցեց:

— ԶԷՆԴ ԿՈՐԻ, — բարկացաւ պառաւը գը-
լուխը թափ տալով. — Կորի, աչքիս չերեւաս,
որ այդպէս անպիտան ես:

Աղջիկը կամաց իջաւ մնդուկի վրայից
գլուխը քաշ գցած, դրանը մօտեցաւ:

— ՔԵՇ ԵՄ ասում... Եթէ Անտէկին
կներես չեմ դուրս անի, արի. պառաւը ձայն
տռւեց ետեից: — ՔԵՂ ԷԼԻ ինձ մօտ կպահեմ
և կաթն էլ կտամ... ՀՇ, ԲՇՆՀ ես ասում:

Խլիանկան ամենսին երեսն էլ շուռ
չտուեց և ձեռքը մեկնեց դուռը բանալու:

— ՅԵՄ դարձի, արի մօտս, հոգիս, — ա-
սաց պառաւը վրդովուած և զգացուած: Իւ-
լիանկան յետ եկաւ յօնքերը կիտուծ և բար-
կացած... Պառաւը ձեռքով շոյեց նրա ման-
կական գանգրահեր դլուխը:

— ԱՇ ՂՋԻԿՍ, լսիր ինձ... ՆԵՐԻՇ ԱՆՏԵ-
ԿԻՆ — մեղմ ձայնով խնդրում ու դուրդուրում
էր պառաւը. — ԳԻՄԵՇ ս հոգիս, Աստուած ինձ
կպատճի, եթէ ես քեզ չսովորեցն եմ նրա
պատուիրանները: Ցիշում ես այնշեգիրը
երբ քեզ քաղցած ծարաւ դուրս էին շպըր-
տել տանից, և դու փետացած ու թրջուած
մժութեան մէջ պատէպատ ընկնելով եկար
ինձ մօտ: Ես քեզ ընդունեցի, պահեցի ու
պահպանեցի. ինչ որ ճարում էի շորից ու
կերակրից, քեզ էլ մասն էի հանում: դու
իմ ծածկոցս ես վրադ առնում գիշերը, իսկ
ես վերարկուս... Հապա այսքան երախտիք
ունենալուց յետոյ միթէ հէնց իմ սիրուա
համար չպէտք է ներես ԱՆՏԵԿԻՆ:

Պառաւն իւր չորացած ձեռքով շոյեց ե-
րեխայի գանգուրները և մայրական փաղաք-
շանքով համբուրեց նրա ճակատը:

— ՆԵՐՈՒՄ ԵԱ, աղջիկս:
— Այս, ներում եմ, ասաց Խլիանկան
ժպտալով և համբուրեց նրա ձեռքը:

Այսպէս, շատ ապրես, հոգիս.—
պառաւն աւելի մօտեցրեց նրան՝ համբոյներ
դրոշմելով ճակատին:—Կպիր ինձ: Ես քեզ
կպատմեմ, թէ ինչպէս Աստուած ամբողջ աշ-
խարհը ստեղծեց ոչնչից և թէ յետոյ ի՞նչ պա-
տահեց... Գիտե՞ս, որ ես լաւ ուսում եմ ստա-
ցել. մի ժամանակ ես իմ ծանօթներիս շըր-
ջանում լսելոք և սրախօս էի համարւում...
Բայց ուր են այժմ այդ մարդիկը... Ե՞հ,
ով կսպասէր այս օրերին...

Հ:

Օրեր, ամիսներ ու սարիներ էին անց-
նում... Արդէն բոլորել էր երրորդ տարին.
պառաւը մասսամբ փոխել էր իւր կեանքի ե-
ղանակը: Նա շատ սակաւ էր տանից դուրս
գալիս. իրեն կերակրող ձեռքերը այլ ևս չէին
կարողանում առաջուայ նման վարդետու-
թեամբ բանեցնել ճաղերն ու կառթերը...
Նա շատ յաձախ, երբ զգում էր իւր աչքե-
րի թուլութիւնը, խորը վշաացած և վրդո-
վուած շնչում էր ինքն իրեն. «Բոլորովին,
բոլորովին վշացել են աչքերս»:
Նա անգամ նա վարդագոյն թելք խառ-

նում էր դեղնագոյնի հետ, բայց կապոյտը
բանեցնում էր կանաչի տեղ, և տասը տասն-
երկու ժամ աշխատելուց յետոյ ձեռքի բանը
դէն էր չգցում:

—Աղջիկս, աղօթի՛ր, աղօթի՛ր Աս-
տուծուն, որ նա գոնէ աչքիս մնացած լոյսը
խնայի, դառնում էր նա Իւլիանկին յուսա-
հատ. —Աստուած լսում է անմեղ երեխաների
աղօթքը:

Մօտալուտ կուրութեան երկիւղը սար-
սափեցնում էր նրան... Նա այլ ևս չէր կա-
րողանում նուրբ գործուածքներ ձեռք առ-
նել և ամբողջ օրը սեղանի մօտ նստած՝
գուլպայ էր գործում. տիրութիւնից նրա
բերանը խօսք չէր գալիս և չէր խօսում ոչ
ինքն իրեն և ոչ էլ Իւլիանկայի հետ... Վե-
րահաս վտանգը նրան պապանձեցրել էր... Նա
զգում էր, որ այսօր կամ վաղը ձեռքն է առ-
նելու մուրացկանութեան պարկը և դռնէ
դուռն ընկնելու:

Նրա ցուրտ ու խոնաւ բնակարանը շատ
ուշ ուշ էր կրակի երես տեսնում. կաթն էլ
արդէն հազուադիւտ կերակուր էր դարձել
նրա համար... Կերակրում էր միայն ջրի
մէջ թրջած չորացրած խորեղէններով: Էլի
չէրը բարի տայ Զլոտկային. տեսնելով պա-

ռաւի և նրա որդեղբուհու վիճակը, խղճում
էր նրանց և երբ Խլիանկան փող էր քերում
խանութը խմբեղէն տանելու, մէկն էլ աւել
լի էր տալիս:

Մի անգամ Խլիանկան ներս մտաւ սե-
նեակը և չորս կողմը նայելով, տեսաւ որ
պառաւի ոչ մահճակալն է երկում և ոչ էլ
բարձր... դրանց փոխարէն յատակին թա-
փուած էր մի կոյտ ծղնօտ և խոտով լիքը
մի պարկ:

— Այս վիճակին էլ հասայ... իս սե-
օրն էլ տեսայ..., կամաց շնչաց պառաւը:
Բարձն ու մահճակալը անյայտանալուց
յետոյ, իրար ետևից անյայտացաւ և բամբա-
կի վերարկուն, որ միշտ պատից կախուած էր
մինում և փոքրիկ սեղանը, մնդուկը և մինչեւ
անգամ սնդուկի վրայ փուած դորդի ցնցու-
տին... Սենեակում միայն ծղնօտն ու խաճն
էին մնացել:

Պառաւն այլ ևս բան չէր շնում...
Հազիւ միայն կուրէ-կուր դուլպայ էր դոր-
ծում:

— Ո՞վ կապասէր, ո՞վ, որ այս օրին
կհասնեմ.— շարունակ կրկնում էր պառաւը...
Ա՞խ, ինչ դժուար է... Բայց էլի փառք ին-
քն, նրա կամքը պէտք է կատարուի:

Մի գիշեր Խլիանկան կուչ էր եկել սե-
նեակի մի անկիւնում, վրդոված քունը չէր
տանում, երբ յանկարծ լսեց պառաւի յու-
սահատական բացականչութիւնները.

— Աստուած, Տէ՛ր իմ... ինչո՞ւ հոգիս
չառար, որ այս սե օրեքը չտեսնեմ...

Աղջիկը ականջները սրեց լսելու պառա-
ւի բացականչութիւնները, բայց շուտով քու-
նը տարաւ: Առաւօտը զարթնելով սովորա-
կան ժամփն, նա տեսաւ, որ պառաւը զլու-
խը դրած խոտով լիքը պարկի վրայ, աչքերը
պինդ խփած՝ քնած էր քաղցր ու անդորր
քնով:

Մի քիչ յետոյ պառաւը վեր կացաւ և
գնաց...

Խլիանկան բակի մէջ վազվակելով և ան-
գործ լրջելով, աշումքուայ կարծ օրը մթնաց-
րեց, իսկ ժամաժանքին տուն վերադարձաւ:
Դուռը բանալով, նա յետույետ գնաց. մնաց
շուտրած, չէր հասկանում թէ իրենց բնա-
կարանը ինչ է զարձել:

Սենեակի մէջ տեղը մի մեծ սեղան էր
դրուած, սեղանի վրայ շարուած էին օղու և
գարեջրի շնչը, ամաններ... Երեք հոգի տղա-
մարդիկ գոռգոռում, իրար հայհոյում էին,

Էժանագին ծխախոտ էին ծխում և թուղթ
խաղում:

Խլիամնկի լայն եկաւ և շփոթուած գնաց
ջլոտկայի մօտ:

— Ո՞րտեղ է իմ տիկինը:

— Փո տիկի՞նը... Հը... Տիկն՞ջն ես
հարցնում... Կմլմաց հրէուհին և չգիտէր
թէ ինչպէս իմաց տայ աղջկան այդ բօթը...

— Մի՞թէ նա քեզ մնաս բարեւ չարեց:
Երեխան պատասխան չտուեց և մի փոքր
լոելուց յետոյ հարցրեց.

— Նա այլ ևս չի վերագառնայ:

— Ել ինչու համար վերագառնայ, — պա-
տասխանեց ջլոտկան, — վող չունէր, որ բնա-
կարանի վարձը տայ, այդ պատճառով էլ ձա-
նապարհ դրին. այժմ այնտեղ անգործ սպա-
սաւորներն են ապրում... Նրանք այժմ ար-
դէն կերուխում և թղթախաղի մէջ են...

Խլիանկան այլ ևս հրէուհու ասածնե-
րը չէր լսում: Նա վայր ընկնելով շէմքին,
մատները խճճեց մազերի մէջ, երեսը ծնկնե-
րի մէջ խոնարհելով, սկսեց այնպէս հեկեկալ,
որ արտասունքներից խեղդում էր... Հրէու-
հին աշխատում էր նրան հանգստացնել, գուր-
գուրում էր և կարկանդակներ տալիս... Երե-
խան հրեց հրէուհու ձեռքը, յատակի վրայ

շպրտեց կարկանդակները և վազեց դէպի բա-
կի մի մութ անկիւնը. երկար ժամանակ այդ
անկիւնից լսում էր նրա լայն ու հեկեկանքը...

Երեխան ողբում էր իւր երրորդ որ-
բութիւնը... Նա էլի մնաց ցուրտ ու խոնաւ
գետնին, մռայլ ամպերի տակ, աշնան դառը
քամին և անձրել ծեծում էին նրան և
պատսպարուելու ոչ մի տեղ չունէր:

թ.

Այդ օրուանից յետոյ ամեն առաւօտ
Խլիանկան գուրս էր գալիս բակի քանդուած
տան աւերակներից և ամբողջ օրը շրջում էր
ուտելու բան գտնելու... Գիշերը անց էր
կացնում այդ աւերակ տան ընդարձակ սրա-
հում, որի մի անկիւնում ոտները ջարդուած
և պատուած հին բազվաթոռ կար ընկած.
Երեխան կծկում էր նրա վրայ և քնում:
Նրա շուրջը վիտում էին մլները, բայց նա
նրանցից ամենելին չէր վախենում. մինչև ան-
գամ դուր էր գալիս նրանց վազվելն ու
չարչարանքը. առանձին հետաքրքրութեամբ
նայում էր, թէ ինչպէս նրանք ամեն մի փա-

լասի կտոր գզզզում և քաշիռտում էին, և
նրանց նայելով իւր միայնութիւնը պահաս
էր զբում:

Շատ անգամ նա ուրախ ժպիտը երեսին
և գրկաբաց վազում էր խաղացող երեխանե-
րի մօտ... բայց նրանք շատ սակաւ էին մօտ
թողնում կեղտոտ ու պատոտուած «ընկեցի-
կին»: Բակի երեխաների մէջ Խւլիանկան ան-
հաշտ թշնամիներ էլ ունէր. նրա թշնամի-
ներն էին Անտէկը եւ գերձակի միակ երես
առած աղջիկը, որ միւսներից աւելի մաքուր
էր հագնուած և խաղալիք էլ ունէր ձեռքին:
Այդ խաղալիքի պատճառով երեխաներից շա-
տերը նրան շողոքորթում էին, իսկ նա յայտ-
նել էր ամենքին, որ եթէ «գզզզուած-Խւլիան-
կին» իրենց հետ կխաղացնեն, նա իւր խա-
ղալիքով կերթայ հարեւան բակումը խաղալու:

Երբեմն միայն Անկան էր պաշտպանում
անտուն և անտէր աղջկան, որովհետեւ խա-
ղի ժամանակ նրան ծառայեցնում էր, հար-
կաւոր եղած ժամանակ հեռուից ջուր, աւաղ
բերել տալով կամ վազեցնելով ձիու նման:;
Բայց թէ ի՞նչքան էին ծեծում, չանգոտում
և նեղացնում իւղադ՝ Խւլիանկին, հաշիւ չկար:
Ամենից աւելի նրա վրայ Անտէկն էր գո-
ռում և կուռում հետը:

Առաջ Խւլիանկան լաց էր լինում, լունդ-
րում էր, որ ձեռք չասն իրեն, բայց յետոյ
ու յետոյ նա լաց ու հեկեկանքից ձեռք բա-
շեց և բոլորովին հեռացաւ երեխաներից:
Մինչեւ անգամ, եթէ երբեմն նա ստիպուած
էր լինում անցնել այն տեղով, որտեղ երե-
խայբը հաւաքուած խաղալիս էին լինում,
նա պատէպատ գողունի էր անցնում նրանց
մօտովը և հեռուից խեթում իրեն «վիրաւո-
րողներին»:

Անտէկը այդպիսի դէպքերում էլ հան-
գիստ չէր թողնում նրան: Իմաց տալով և
բզբգելով ընկերներից մի քանիսին, ձիչ ու
աղմուկով ընկնում էին նրա ետեից, և
զուարձանում էին՝ երբ նա փախչում էր հա-
լածողների երեսից:

Քաղցածութիւնից ստիպուած երեխան
թափառում էր սրա նրա շէմքերին ու պա-
տուհանների տակը: Յաճախ նա մտնում էր
բակի ունեսոր տանտիկնոջ սրահը, որտեղ
լսւում էր սպիտակեղին հարթելու գլանի
ձայնը... Տանտիկինը, եթէ լաւ տրամադրու-
թեան մէջ էր լինում, այդաեղ աշխատող կա-
նանցից մէկին ուղարկում էր մի կտոր հաց
ու պանիր բերելու «ընկեցիկի համար»: Բայց
որ օրը որ նրա եկամուտը քիչ էր լինում,

Հէնց որ տեսնում էր Իւլիանկին շեմքումը, անիծում, հայհոյում էր և յարձակվում էր վրան դուրս անելու.

— Ի՞նչ ես շարունակ այստեղ քաշ գաւ լիս: Սեւ լինէր այն օրը, երբ քեզ գտաւ մուրացկանը բակի դրանը, չգիտեմ ինչո՞ւ գրողի տարածները քեզ բակի բոլոր կենողների խնամքին յանձնեցին. խոստացան, որ ամեն ամիս փող կհաւաքեն, բայց այժմ միայն ես եմ կերակրում... Կորի, աչքիցս հեռացի:

Իւլիանկան լուր ու գլուխը կախ իջնում էր սանդուխքներից և գնում էր բակի այն կողմը, ուր երեսում էին երկու մաքուր պատուհաններ. պատուհանների առաջը շարուած էին ծաղկամաններում տնկած հասարակ ծաղիկներ... Սենեակի մէջ տեղը գըլրդում էր ճախարակագործի մեքենան, իսկ պատուհաններից մէկի առաջը նստած էր երիտասարդ աղջիկը կարը ձեռքին: Վարդագոյն այտեր ունէր նա և ոռւսական ծամերն էլ փոռուած էին նրա ուսերի վրայ. իսկ ուսերը ծածկուած էին ասեղնագործ ծածկոցով խաչմերուկ ծալած:

Ճախարակագործի արհեստանոցին կից գտնուում էր նրա խոհանոցը, որն այժմ բանեցնում էին թէ որպէս ննջարան և թէ որ-

պէս սեղանատուն: Բաց գոնից երեսում էր մաքուր և յարդարուած անկողինը և պատից կախուած սրբերի պատկերները:

Տունը մայրն էր կառավարում, հայրը ամբողջ օրը չէր հեռանում մեքենայից, իսկ Կատիան՝ նրանց կարմրաթուշ աղջիկը «ուրիշների համար» կար էր անում:

— Հայրիկ, — դառնում էր Կատիան հօրը, — որբ աղջիկը էլի եկել ներս է նայում մեր պատուհանից...

Բայց հայրը մեքենայի դպրոցից ոչինչ չէր լսում: Կատիան վեր էր կենում գնում խոհանոցից մօրը կանչում էր: Դուրս էր գալիս մայրը՝ այդ կարմրերես ու գեր կինը մի երեխան գրկին, — իսկ միւսի ձեռքից բռնած, և Իւլիանկային կամ մի բաժակ կաթն էր տալիս կամ մի կտոր հաց: Իւլիանկան շատ էր սիրում դրանց բնակարանի առաջը կանգնել և նայել այդ տաք ու կարգին սենեակներին:

Նատ անգամ ցուրտ օրերին ճախարակագործը տեսնելով այդ փոքրիկ որբ աղջկանը բացականչում էր.

— Մեղայ քեզ Տէր Աստուած. — և յետոյ գառնում էր տանեցոց. — այ կնիկ, Կատիա, ինչո՞ւ չէր այդ անբախտ երեխայի վրայ ուշը դարձնում: Խեղձը բոլորովին ցնցոտիների մէջ

Է. ուստեղու բան տուէք, գոնէ մի երկու ժամ
տաք սենեակում նստացրէք:

— ՆԵՐՍ արի մեզ մօտ, — կանչում էին

Իւլիանկին:

Օ՛Հ, ո՛րքան երջանիկ էր զգում նա
իրեն այդ տանը գոնէ մի քանի ժամ: Այդ
տեղ նա տաքանում էր, կշտանում և ոչ ոք
էլ նրան չէր հայհոյում... Այդտեղ միայն նա
«ըսկեցիկ», «մուրացկան», «գզզուած» զզուե-
լի ու նախատական բառերը չէր լսում: Այս
տանը շատ անգամ նրան լողացնում, մաք-
րում և մաղերը սանրում էին, հնից նորից
շոր էին հազջնում... Պատահում էր, որ եր-
բեմն էլ մինչեւ անգամ քնում էր սիրունիկ
Կատիայի հետ միւնոյն սենեակումը, Ճիշտ է
գետնին, բայց տակին լինում էր խոտէ մա-
հիծ, իսկ գլխատակն էլ — բարձ:

Բայց նրան մշտապէս պահել չէին կա-
րող... Առանց դրան էլ նրանք հինգ երեխայ
ունեին և վեցերորդին էլ... սպասում էին:
Թէպէտ դրանցից երկուսը ուսման պատճա-
ռով ապրում էին քաղաքումը, Կատիան էլ
օգնում էր, բայց և այնպէս այդքանին կե-
րակրել, հազջնել և պահպանել էր հար-
կաւոր:

Իւլիանկին բակումը կերակրում և տա-

քայնում էին էլի մի քանի տեղ և նա այդ
կերպով քաշ էր տալիս իր կեանքը և ապ-
րում էր:

Ժ.

Մի գիշեր սասափիկ բուք արեց և քիչ էր
մնում խեղձ երեխան փետանայ:

Ճախարակագործի տան պատուհանի տա-
կը մի հասարակ փոքրիկ նստարան կար դը-
րուած, որի վրայ բարձրանում էր Իւլիան-
կան՝ երբ ստիպուած էր լինում նրանց պա-
տուհանը թակելու. այդ նստարանը վերցրել
էին և սրահի առաջն էլ այնքան ձիւն էր կի-
տուել, որ երեխան այդ գիշերը չկարողացաւ
մօտենալ և ներս մտնել: Յետ դարձաւ և
քայլերն ուղղեց ունեոր տանտիկնոջ բնակա-
րանի կողմը, բայց մինչեւ այնտեղ համնելը,
արդէն դուռը փակել էին... Իսկ Զլոտկայի
բնակարանին չկարողացաւ էլ համնել...

Ճարը կարուած նա դարձաւ դէպի լուա-
ցարարի բնակարանը: Փետանալու երկիւղից
նա մոռացաւ դէպի Անտէկը տածած ատե-
լութիւնը և նրա հօր սարսափը, դուռը բազ-

խեց և ապա որքան ոյժ ունէր շարժեց
ամուր:

— Ո՞վ է—ներսից ձայն տուեց լուացա-
րաբը:

— Իւլիանկան եմ.—վախվախելով պա-
տասխանեց երեխան:

— Տէ՛ր Աստուած, այս բուք ու ցրտին
երեխան դուրսն է մնացել, մինչև առաւաօտ
նա բոլորովին կսառչի... Անկա, շուտ վեր
կաց դուռը բաց արա, — ձայն տուեց լուացա-
րաբը իւր աղջկանը:

Հէսց որ Իւլիանկան ներս մտաւ, Անտէ-
կը քնէքուն սկսեց փնթփնթալ.

— Ի՞նչ ես անում, մայրիկ. դրան ներս
ես թողնում, ի՞նչ պատասխան պէտք է տաս,
եթէ հայրս գայ:

Մայրը լոեց և պատասխան չտուեց:
Եղբօր խստաբառութիւնը կատաղեցրեց Ան-
կային:

— Դու լաւ կանես, որ ձայնդ կտրես և
քնես, — գոռաց նա եղբօր վրայ. — քեզ հարց-
նող չկայ, դու քնի. եթէ հայրս կգայ ես
նրան կթագցնեմ:

— Ո՞րտեղ կթագցնես, նա այժմ ահա-
զին աղջիկ է:

Անկան այլ ևս պատասխան չտուեց և

Ճրագ էլ չվառեց. բռնեց փետացած աղջկայ
ձեռքից և տարաւ դէպի իւր անկողինը:

— Ա՛յ, պառկիր այստեղ, մենք միասին
կքնենք, — ասաց նա Իւլիանկային, — գու նը-
րան ուշադրութիւն մի՛ դարձնի, թող հաջի,
հաջի և լոի:

Սենեակի մէջ լոռութիւն էր տիրել: Մի
քանի րոպէից յետոյ Անկան անհանգիստ և
հոգածու ձայնով շշնջաց մօրը.

— Մայրիկ.

— Հը՞, ի՞նչ ես ուզում.

— Բոլոր կեղտոտ սպիտակեղէները մի
տեղ կհաւաքեմ, այ, այստեղ. եթէ հայրս
կգայ, կթափեմ Իւլիանկայի վրայ և կթագց-
նեմ. լաւ լի՞ լինի:

Մայրը ինչ որ փնթփնթաց կիսաքուն...
Երկար ժամանակ Անկան փսփսում էր մթու-
թեան մէջ, որպէս զի իւր մտքինը զլուխ
բերի, եթէ դաժան հայրը երևայ...

Ցակովին այդ գիշերը չեկաւ: Առաւօ-
տեան զարթնելով Իւլիանկան և Անկան նը-
տել էին կողք կողքի: Անկան Իւլիանկայից մի
քիչ բարձր էր, նրա երկար շէկ մազերի ծայ-
րերը խճճուում էին Իւլիանկայի սև խոպո-
պիկների մէջ: Երկուսի հազին էլ կոսկիտ շա-

պիկ կար և երկումն էլ գունատ էին...
Նրանք իրար նայեցին և համբռւրուեցին;
Առաւօտեան Խլիմնկային նախաձաշ էլ
տուեցին. նա դուրս եկաւ սենեակից երկու-
խորոված գետնախնձոր ձեռքին..., դժբախ-
տաբար հենց այդ միջոցին մօտ եկաւ Անտէ-
կը... երեխայի ձեռքից խլեց գետնախնձոր-
ները և ծիծաղելով շպրտեց ձիւնի մէջ:

Խլիմնկան բռունցքով սպառնաց այդ
չարաձճի անպիտանին, անիծեց ետեից և
գնաց գետնախնձորները վիտուելու:

ԺԱ.

Մի անգամ Խլիմնկան նստած էր Զլոտ-
կայի խանութի շեմքին: Հրէուհին դուրս
գալով խանութից տեսաւ նրան և երկու հատ
կարկանդակ տուեց. նա հենց այդտեղ էլ
նստած սկսեց ուտել կարկանդակները... Այդ
միջոցին տեսաւ, որ Անտէկը հարեւան բակից
եկած երկու ուրիշ երեխաների հետ միասին
մտաւ հրէուհու խանութը: Թէ Անտէկը և
թէ նրա ընկերները կլինէին մօտաւորապէս
տասներկու կամ տասներեք տարեկան. ամենքն
էլ ուրախ էին և համարձակ: Նրանցից մէկը,

որ ոտարոբիկ էր և գզգզուած, բոթբթում
էր ընկերներին և գուգուալով. մի լկտի երգ
էր երգում:

— Ե՛յ, Յի պա, — ձայն տուեց նա Զլոտ-
կայի փոքր թոռանը, որը նստած էր կշռա-
սեղանի ետեր, — լցրո՞ւ, մի մի բաժակ կոն-
ծենք:

Յիսպան դանդաղութեամբ լցրեց երեք
բաժակ:

Երեխանները օղին կուլ առուեցին... Ան-
տէկը երեսը կնձռոտեց, հազար ևսկսեց թքել:

— Ածա էլի մի մի բաժակ, — հրամայեց
ոտարոբիկ երեխան, և երեսուն կոպէկ շպըր-

տեց կշռասեղանի վրայ: Անտէկը
— Ես այլ ևս չեմ կամենում, — Անտէկը
հրաժարուեց, — Բնէջ կատի մայրս, որ տեսնի...

— Ե՛յ, խմի՛ր, յի՛ մար, — ստիպում էին
Անտէկին ընկերները:

Բաժակները էլի պարպեցին: Արիւնը
գլխներն էր խփել, այտերը կարմրել էին և
աչքերը փայլում էին... Այդ չարութիւնը
նրանց զուարձացնում էր: Նրանք փնչացնում
էին, երեսները կնձռոտում, թքում, բայց և
այնպէս յամառութեամբ խումամ էին, որով
հետեւ այդ անմիտ երեխանները իրենց արածը
քաջութիւն էին համարում:

— Ցիպա, ածա տեսնե՞նք էլի մի կէտ
կէտ բաժակ...

Խանութից դուրս գալիս դրանք օրօր-
վում էին, լեզուները շաղուել էր... Հէնց
շէմքին պատահեց Զլոտկան:

— Վայ, վայ, վայ,— զլուխը շարժեց
պառաւը, նրանց այս զրութեան մէջ տեսնե-
լով: — Ինչո՞ւ ես երեխաներին օղի տալիս, —
բարկացաւ նա թոռան վրայ: — Չե՞ս իմանում,
որ ես նրանց հետ կուռմ, անիծում եմ, երբ
որ օղի են ուզում... Տան և հինգ տարիդ
քշել ես, բայց էլի յիմար ես:

— Ինչո՞ւ եմ յիմար, — վիրաւորուած
պատասխանեց Ցիպան. — Ի՞նչ օգուտ մեզ կամ
նրանց, եթէ ես չտամ և նրանք գնան հա-
րեան զինետանը հարթեն: Աւելի լաւ չի,
որ օգուտը մենք ստանանք:

Կէս ժամից յետոյ Խւլիանկան բակը
դուրս եկաւ, և տեսաւ որ բակի դռան մօտ
մէկը վայր է ընկած ցեխի մէջ: Լաւ նայեց,
և ձանալեց, որ Անտէկն է, հագի շապիկը
ցեխումը շաղախուած և պատուառուած, կուրծ-
քը բոլորովին բաց՝ նա պառկած էր ցեխի
մէջ և խորը քնած:

— Հարբած է, — ասաց Խւլիանկան ինքն
իրեն... — Հիմա ես սրան մի լաւ չջարդեմ:

Նա մինչեւ անգամ կարմրեց ու խնդաց,
երբ մտածեց, որ կարող է այժմ վրէժխնդիր
լինել իւր երդուեալ թշնամուն: Սիրտը բա-
բախում էր... աչքերը փայլում էին: Ծալա-
պատիկ նստեց:

— Կկմշտեմ, կանգուտեմ, մի լաւ կծե-
ծեմ, — մտածում էր նա, և մինչեւ անգամ
արդէն պատրաստում էր բոունցքը բարձ-
րացնելու, բայց... էլի ետ քաշուեց:

Երեսում էր, որ նա մի բան մտաբերեց
և ինքն իրեն դէմ կուռմ էր:

— Ներե՞մ արդեօք. — մտածում էր նա,
— իմ բարի տիկինը խնդրում էր, որ ներեմ
նրան:

Բայց վրէժխնդրութեան զգացմունքը
այնքան բորբոքուել էր նրա մէջ, որ սղմուած
բոունցքները չէր ուզում բանալ և աչքերն
էլի վառւում էին...

— Է՞հ, աւելի լաւ է ներեմ, — վճռեց
նա վերջապէս, ինքն իրեն յաղթելով... Խոս-
տացել եմ և պէտք է ներեմ: Ո՞վ է իմա-
նում, գուցէ էլի տեսնում եմ իմ բարի տիկնո-
ջը, նրան կպատմեմ այս դէպքը և կասեմ որ
ներեցի... Գիտեմ, շատ կուրախանայ:

Նա կռացաւ, նայեց Անտէկի երեսին և...
նորից մտածմունքի մէջ ընկաւ:

— Ինչպէս որ իմ տիկինը սովորացրել է
խնձ, այնպէս էլ կվարուեմ... Կազօթեմ սրա
համար, որ Աստուած սրան խելք տայ, օրի-
նաւոր մարդ դառնայ, որպէս զի իւր մօրը
չվշտացնի...

Երեխան չոգեց ցեխի մէջ ձգուած և
հարբած Անտէկի գլխավերելը, ձեռքերը ծա-
լեց կուրծքին, գեղեցիկ աչքերը երկինք բարձ-
րացրեց և բարձր ու պարզ առողանութեամբ
սկսեց աղօթել.

— «Հայր մեր, որ յերկինս ես» և այլն:

Իւլիանկան չէր մոռանում իւր բարի
տիկնոջը. պառաւի տուած դասերը խորը
տպաւորուել էին նրա մատաղ սրտի վրայ...

Մի, թէ երկու տարի էր անցել այն օ-
րուանից, երբ նրանք բաժանուեցին...

— Զարմանալի երեխայ է սա, — Զլոտկան
պատմում էր ամենքին, — այսպիսի երեխայ ես
չեմ տեսել... Ո՞րքան ժամանակ է, ինչ դրան
հովանաւորող պառաւը հեռացել է այս բա-
կից, բայց գեռ հիմա էլ, քանի անգամ եմ
տեսել, գնում է այն սենեակի զրանը սան-
դուղքների վրայ նստում... Այնաեղ ոչ ոք
նրան չի կերակրում, ոչ ոք չի գուրգուրում,
բայց... նստում է ամբողջ օրերով և աչքերից
արտասուք թափում...

...անդամ միջնը զույ զամաք ով նայափ
ամաթ զամաքը մի համայ մարմարը
ի և նախման զույ զամաքը ու առան ու նայ
Որբ աղջիկն արդէն ութը տարեկան էր:
Նրա գէմքը գունատ էր, սկ ու երկար ծա-
մերը վոռուած էին ուսերի վրայ, իսկ հրա-
շալի աչքերը մարդու խելք էին տանում.
շատ անդամ, նա մի գգգուած երկար շրջա-
զգեստ հագին խաղալիս էր լինում բակի վրա-
նը և ակամայ գրաւում էր անց ու դարձ
անողների ուշադրութիւնը:

— Ո՞ւմ երեխան է, շատ անդամ հարց-
նում էին անցնազները Զլոտկացին:

— Ամենքինը, — պատասխանում էր Զլոտ-
կան:

— Ինչպէս թէ «ամենքինը»:
— Ճիշտն ասած, «ոչ մէկինն էլ չէ»:
— Ինչպէս թէ «ոչ մէկինը»:
— Գտել ենք նրան, «ընկեցիկ է», վեր-
ջապէս յայանում էր Զլոտկան:

Այդ բոլոր խօսակցութիւնները Իւլիան-
կան լսում էր և տեսնում էր թէ ինչպէս
ամենքը զլուխները շարժում էին մտախոհ,
երբ իմանում էին, որ ինքը «ոչ մէկինը չէ»
և «ընկեցիկ է»:

Գարունքուայ օրերից մէկն էր... արեւ-

փայլում էր, կանաչ խոտը ցնծին տալիս... Իւլիանկան նստած էր բակի զրանը... Յանկարծ նա տեսաւ, որ դրանը մօտենում է մի զառամած մուրացկան կին, ձեռքի փայտը տփութելով ճանապարհ գտնելու։ Ուսերին գցած էր մի հնամաշ, անթեք և հազար տեղից կարկատուած վերարկու, ալեոր գլուխը ծածկուած էր սև թաշկինակով, իսկ ոտները փալասներով և ծակծկուած հողաթափերով։

Իւլիանկան վեր թռուաւ և նետի պէս սլացաւ մուրացկանի մօտ։

— Տիկի՞նս, տիկի՞նս,— գոռում էր նա ուրախութիւնից գլուխը կորցրած, փաթաթուել էր պառաւի փեշերովը, կուրծքին էր սեղմում նրա սեացած և չորացած ձեռքերն ու կուշտ-կուշտ համբուրում։

— Հը... ի՞նչ ես ուզում... Ո՞վ ես,— հարց ու փորձ արեց պառաւը նուաղած և խուլ ձայնով։

— Տիկի՞նս, իս եմ, Իւլիանկան եմ...— Ուրախութիւնից խենթացել էր երեխան, համբուրում և շուտ շուտ փաթաթում էր պառաւին։

— Տէ՛ր իմ Փրկիչ... Մի՞թէ ճանաչեցիր ինձ, բարի, ազնիւ աղջիկս... Ա՞խ, ինչքան ուրախ եմ...»

— Տիկի՞նս, ինչո՞ւ ինձ անտէր թողեցիր և գնացիր։

— Հապա ո՞ւր տանէի քեզ, հոգիս... տեսնո՞ւմ ես ինչ վիճակի եմ հասել... Ես այժմ մուրացկանութիւն եմ անում... Ո՞վ կսպասէր այս օրերին... Ոչի՞նչ չեմ տեսնում, ոչի՞նչ... բոլորովին կուրացել եմ... Ի՞նչ արած, Տիրոջ կամքն այսպէս էր... Մի՞թէ ես քեզ կթողնէի, բայց ի՞նչ անեմ... տեսնում ես... Ամե՞նքը, ամե՞նքն ինձ մոռացան. միայն դու չես մոռացել աղջիկս. Տէ՛րը լինի քո օգնականը, Աստուած պահպանի քեզ։

Պառաւը կամենում էր ճանապարհը շարունակել. ձեռքի փայտը սկսեց տփութել գետնին, ճանապարհը որոշելու...»

— Ինձ անտէր մի՛ թողնի, տիկի՞ն, — աղաչում էր Իւլիանկան պառաւի վերարկուից ամուր բռնած. — Ինձ է՛լ հետդ տար։

— Քեզ է՛լ տանեմ հետս... Որ դոնէ գուռը մուրացկանութիւն անես... Ա՞զիկս, աղջիկս, մտածիր տես ի՞նչ ես ասում... Ես այս ճանապարհն եմ բռնել, որովհետեւ արդէն մի ոտս գերեզմանումն է, բայց գո՞ւ գեռ նոր ես կեանք մտնում և ուզում ես մուրացկանութեամբ հաց ուտել...»

Վաշտ բան է մուրացկանութիւնը, աղջիկս,
Տէրը վրկի քեզ այդ ճանապարհից...

Պառաւը նորից շարժեց ձեռնափայտը և
ուղում էր ճանապարհը շարունակել: Բայց
աղջիկը կարեց նրա տռածը, սեղմում էր նրա
ձեռքերը և համբուրում... .

—Ես էլ եմ գալիս քեզ հետ, ես քեզ
ման կածեմ, —աղաղակում էր Իւլիանկան:

Պառաւի կուրացած աչքերից արտասու-
քի կաթիներ թափուեցին:

—Տէրիմ Աստուած, —բացականչեց պա-
ռաւը, զրկելով Իւլիանկին. —Իմ բարի հրեշ-
տակ, վախենում ես, որ ես վայր կընկնեմ և
կմեռնեմ... Երեխ, Աստուած այդպէս է կա-
մեցել, որ դու էլ հետա լինես... Գնանք, հո-
գեակս, գնանք. ՞վ է իմանում, գուցէ երբ
քեզ տեսնեն պառաւ մուրացկանի հետ,
կիսդան քեզ... Ա՛խ, ինչպէս հեշտութեամբ
և արագ քայլում եմ այժմ... Գուցէ պատ-
ճառն այն է, որ այլ ես կարիք չեմ զգում
փայտով գետնին տվափելու, կամ հենց գու-
ցէ այն պատճառով, որ մի կենդանի մարդ
կայ հետա... Ընորհակալ եմ քեզանից, սի-
րելիս, շնորհակալ եմ անչափ:

Բակի զբանը մօտենալով նրանք կանգ

առան. Իւլիանկան ներս վազեց Զլոտկային
մնաս բարե ասելու. . .

—Ընորհակալ եմ ձեզանից ձեր արած
ամեն բարութիւնների համար... Աս գնում
եմ, —ասաց նա Զլոտկային... Ընորհակալու-
թիւնս հաղորդեցէք ամենքին... Կատեային
Ճախարակագործին, Լուացարարին, Անկային...

—Ա՛ւր ես գնում, —հարցրեց Զլոտկան,
բայց երբ տեսաւ մուրացկան պառաւին, ա-
մեն ինչ հասկացաւ:

—Վերցրու այս, —ասաց Զլոտկան, պա-
ռաւի բուռը դնելով մի բուրլիանոց թղթա-
դրամ: —Հարկաւոր կինի...

—Ա՛յ ինչ լաւ է, ուրախացած պառա-
ւը, —Երեք չորս օր կարող ենք մուրացկանու-
թիւն չանել, այս բաւական է մեզ... Ո՞վ
կսպասէր այսպիսի բան... Ա՛խ, սիրելի աղ-
ջիկս...

Զլոտկան երկար ժամանակ նայում էր
մուրացկանի և գգգզուած երեխայի ետե-
կոյր մուրացկանի: Վյուշուառ արարածներն էլ գոնե-
վից... Այդ թշուառ արարածներն էլ գոնե-
մի քանի բուգէ սրտանոց ուրախացան:

—Իւլիանկա, լսիր, —ձայն տուեց նրա
ետեից հրէուհին. —Երբ և իցէ էլի արի մօտա:
Կգամ, կգամ, —ուրախ ուրախ պա-

տասխան տուեց Իւլիանկան:

ԺԳ.

Պրանից յետոյ շատ յաճախ տեսնում
էին գեղեցիկ Խլիանկին պառաւ մուրացկանի
ձեռքը բռնած ման ածելիս: Սովորաբար նը-
րանք կանգ էին տոնում դռների առաջ և
չին համարձակում բակը ներս մտնել, որով-
հետեւ վախենում էին կոպիտ սպասաւորնե-
րից և շներից... .

—Եկեղեցու դուռը չտանես ինձ, որդի,
—խրատում էր պառաւը երեխային: —Այն-
տեղի մուրացկան կանայք շատ կոպիտ են և
չար... մեզ կծեծեն, եթէ տեսնեն որ մար-
դիկ մեր բուռն էլ կոպէկներ են դնում...
Մեր մուրացկանութիւնը այնքան էլ աչքի չի
ընկնում, երբ մենք տների դռներին ենք ողոր-
մութիւն խնդրում... Նատերը կկարծեն, թէ
մենք մեզ համար կանգնած մարդու ենք սպա-
սում... Հենց որ տեսնում ես մօտենում է մի
որեւէ պարոն կամ տիկին, իսկոյն թես քաշի
և իմաց տուր, միայն դու ամենեին ձեռքդ
չմեկնես ողորմութիւն խնդրելու, Աստուած
հեռու պահի քեզ այդ բանից, որդի... Ես
կպարզեմ ձեռքս, ողորմութիւն խնդրելու...

ԱՌԻ, աՌԻ.—Ո՞վ կսպասէր, ո՞վ, որ այս վի-
ճակին կհասնեմ:

Նատ անգամ, երբ անցնում էին լաւ փո-
ղոցներով, Խլիանկան բերանաբաց նայում էր
մեծ խանութներին և նրանց պատուհաննե-
րում դարսուած առարկաներին... բայց ամենից
աւելի նրան գրաւում էին ամեն տեսակ ուտե-
յեղիններով բեռնաւորուած տեփուրները, ո-
րոնք դարսած էին փողոցի այս ու այն կող-
մը, հաստամարմին առետրական կանայքն էլ
մօտները կանգնած:

—ՈՌԻՓ, իՌԻ լաւ հացեր են... իՌԻ
լաւ կարկանդակներ, —բացականչում էր շատ
անգամ Խլիանկան:

—Զլինի՞ թէ մի որեւէ բանի ձեռք տաս,
—անհանգստութեամբ հարցնում էր պառա-
ւը: —Առանց հարցնելու ոչինչ չվերցնես, որ-
դիս. Աստուած հեռու տանի քեզ այդ բա-
նից... Զմոռանաս Աստուծոյ պատուերը, որ
ասում է. «մի գողանար»... Ի սէ՞ր Աստու-
ծոյ աղջիկս, ուրիշի սեպհականութեանը
ձեռք չտաս:

Երեխան լսում էր պառաւի խրատները...
Բայց շատ անգամ նա այնպէս խեղձ-խեղձ
նայում էր ուտելեղինների տեփուրներին, որ
վաճառող կանայք մի կողքը փթած խնձոր

կամ մի քանի հատ վշացած սալոր էին դէմ
անում... Ինքն ուտում էր և կորում էր
կամ կծում մի կտոր և պառաւի բերանն էր
տանում, որպէս զի նա էլ մասնակից լինի իր
ունեցածին: —Ա իս աղջիկս, աղջիկս—հառաջում
էր շատ անգամ կոյր պառաւը.—Ես միայն մի
խնդիր ունիմ Աստուծուն անելու, որ չեւու-
նեմ, մինչև որ քեզ չտեսնեմ մեծացած և
խելքիդ հասած, այնպէս որ կարողանաս ծա-
ռայել և քո աշխատանքով հայդ ճնրես...
Գո՞նէ տասներկու տարեկան լինէիր, Էլի կա-
րող էիր ինքդ քեզ կառավարել... և այնու-
հետեւ բախտաւոր կիմնէիր... Եթէ մարդ աշ-
քի լոյս ունի և առողջ ձեռքեր, կարող է
իւր սեպհական աշխատանքով ապրել... Բայց
կլսի՝ արքեօք Աստուծած իմ մեղաւոր ձայ-
նը... Աղջիկս, ոսկրացաւն արդէն սկսել է ինձ
նեղացնել... Խոնաւ է, խոնաւ մեր գիշե-
րուայ ապաստարանը... Վախենում եմ, որ մի
գուցէ վաղաժամ քայքայուին իմ փթած ոս-
կորներս... Ո՞վ կսպասէր այս օրերին...

Գեռ Իւլիանկի տասներկու տարին չեր
լրացել, դեռ նա «սելքին չեր հասել» այն-
քան, որ կարողանար իւր հացը վաստակել,
տարի ու կէս առաջ թշուառ պառաւի ու-

կորները քայլայուեցաւ. Բայց և այնպէս նրա
խրատները ապարդիմ չտնցաւ. Նրա յանած
սերմերը շատ խորն էին թաղուել Քվիանիի
մատադ հոգու մէջ:

Իւլիանկան պառաւելի մահից յետոյ սու-
վորեց մուրացկանութիւնը և մինչեւ անգամ
երեսը պնդացրած ձեռքը դէմ էր անում անց
ու գարձ անողներին. թէ եկեղեցու գոներին
էր քաշ գալիս և թէ փողօցային երեխանե-
րի խաղերին մասնակցում. Բայց և այնպէս
նրա բնաւորութեան մէջ մի բան կար, որով
և որով չափով զանազանում էր անտէր ու
փողոցներում քաշ եկող երեխաներից; Եւ ա-
հա թէ ինչու համար Իւլիանկին շատ յա-
ճախտ տեսնում էին «աղքատների» գերեզմա-
նատանը, որտեղ մինչեւ անգամ երբեմն նա
քնում էր այն հողակոյտի վրայ, որի տակը
ամփոփել էին կոյր մուրացկան պառաւին:

Քաղաքումը մի քանի հարուստ ընտանիքներ այդ «գեղեցիկ որբ աղջկան» ողործութիւն տալուց զատ, երբեմն էլ թոյլ էին տալիս, որ նա խոհանոցը մտնի տաքանալու, մինչև անգամ ցանկանում էին, որ նա տնաշին աշխատանքներին վնտելանայ»: Ինչ գործ որ յանձնում էին, Իւլիանկան ամենայն պատրաստականութեամբ կատարում էր. հենց


ինքն էլ խնդրում էր, որ թողնեն խոհանոցը
աւելի, տան յատակը լուանայ, ինքնաեռը
մաքրի և այն:

— Ես ամեն բան կարող եմ անել, — շատ
անգամ պարծենում էր նա:

— Եատ մաքուր երեխայ է, — ասում էր
շատ անգամ ծառան տիրոջը՝ Իւլիանկի մա-
սին: — Ոչ մի բանի ձեռք չէ տալիս: Ճշմա-
րի տն եմ ասում, առաջը որ ոսկի էլ լինի
թափած, չի վերցնի...

Շատ անգամ շոյում էին նրա գանդրա-
հեր գլուխը և փաղաքշում...

Իւլիանկան մի տարի մենակ թափառե-
լուց յետոյ, յանկարծ քաղաքից անյայտա-
ցաւ... Ո՞ւր կորաւ նա արդեօք... Աստուած
գիտէ...



Թիֆլիսի ՀԱՅՈՅ ՀՐԵՏԱՐԱԿՉԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1900-ին լոյս են տեսել.

	թ.
172 Առակը Լոմփօնթէնի, թարգմ. Ա. Խուզարեանի	1 —
173 Գոեհիկ, թարգմ. Ա. Մ.	— 40
174 Խղճով գատառատան	— 05
175 Հայկական նշանագրեր հարթակարի համար, կազմ. օր. Եղ. Պատկանեան	— 80
176 Հոսհոսի ձեռատեարբ, Յ. Պարսնեանի, բ. տալ.	1 —
177 Սիֆիլիս, կակուղ շանկը և սուսունակ, բժշկ. Վ. Արծրունի	— 25
178 Մանկական լուսո, բ. ապազրութիւն	1 —
179 Սաքսիմկա, թարգմ. Ա. Մ.	— 15
180 Թշուառների բարեկամ բժ. Հասղ, փոխ. Վ. Արծր. — 20	
181 Խղիանկա, թարգմ. Պ. Հովուեանցի	— 05

ՆՈՒԷՐ ԱՏԱՅՈՒԱՆ ԳՐԲԵՐ

(Վաճառւութ ևն Բնկերութեան օդախն)

Ազուլեյոց բարբառը, Ս. Սուրսկեանի	2 —
Մեղուներ, Լ. Լանդուռոսի, թարգմ. Զօկ.	— 15
Կորիմ վարդապետ և նորին թարգմանութիւնք, Նարայի Ն. Բիզանդացի.	2 —

Հ. 31 Դ.

Դիմել—Тифлисъ, Тифлисское Общество изданія Армянскихъ книгъ, Կամъ Tiflis, (Russie), Société de la publication des livres arméniens.

4881



